ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մարտի 23-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 25.01.2022) համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գագիկ Սերգեյի Ասլանյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի հունվարի 25-ի համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի փետրվարի 23-ին ռեկտորին դիմում է ներկայացրել կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գագիկ Սերգեյի Ասլանյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Գ.Ս.Ասլանյանը ծնվել է 1954 թվականի փետրվարի 25-ին Թալինի շրջանի Վերին Թալին ավանում: 1997 թվականին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (ԵրԺՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ))՝ ստանալով տնտեսագետ-

մաթեմատիկոսի որակավորում: 1979-1985 թթ. սովորել է ԽՍՍՀ ԳԱ Կենտրոնական տնտեսագիտամաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրայում (ք. Մոսկվա):

Գ.Ս.Ասլանյանը 1985 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «08.00.13 - Математичиские методы и применение вычислительной техники в экономических исследованиях, планировании и управлении народным хозяйством и его отраслями» («08.00.13 - Մաթեմատիկական մեթոդներ և հաշվողական տեխնոլոգիաների կիրառումը տնտեսական հետազոտությունների, ժողովրդական տնտեսության, նրա ճյուղերի պլանավորման և կառավարման մեջ») մասնագիտությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2012 թվականին ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Գ.Ս.Ասլանյանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով ռեկտորին ուղղված դիմումը ներկայացրել է «Տնտեսագիտություն» բնագավառի Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Գ.Ս.Ասլանյանը հրատարակել է ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 17 է (այդ թվում՝ 1 դասագիրք՝ համահեղինակությամբ, 1 կոլեկտիվ մենագրություն, 1 դասախոսությունների տեքստ, 2 ուսումնական դասընթացի ծրագիր, 12 գիտական հոդված, որից 4-ը՝ համահեղինակությամբ):

Գ.Ս.Ասլանյանի աշխատանքային գործունեությունը: 2006 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 01.09.2006-16.03.2009 թթ.՝ կառավարման ամբիոնում՝ ասիստենտ, 17.03.2009-31.08.2011 թթ.՝ ուսումնական գործընթացի տեղեկատվական սպասարկման ծառայության պետ, 01.09.2011-02.09.2012 թթ.՝ կառավարման ամբիոնում՝ ասիստենտ, 03.09.2012 թվականից մինչ օրս՝ դոցենտ: Գ.Ս.Ասլանյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ աշխատել է պետական կառավարման համակարգում: Գ.Ս.Ասլանյանը 1977-1979 թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտում՝ տնտեսագետ, կրտսեր գիտաշխատող: Ասպիրանտուրան ավարտելուց հետո 1985-1990 թթ. աշխատանքը շարունակել է ՀՍՍՀ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտում՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող: 1990 թվականին փոխադրման կարգով աշխատանքը շարունակել է Երևանի «Պլաստիկ» արտադրական միավորումում՝ գլխավոր տնտեսագետ, 1993-1999 թթ.՝ «Պլաստիկ» ԲԲԸ-ի տնօրենի տեղեկալ-գլխավոր տնտեսագետ: 1999 թվականի մայիսի 30-ին ՀՀ ԱԺ պատգամավոր է ընտրվել «Միասնություն» դաշինքի համամասնական ընտրացուցակով (ՀԺԿ): Եղել է ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 1999 թ. նոյեմբերի 2-ին ընտրվել է ԱԺ նախագահի տեղակալ և պաշտոնավարել է մինչև 2003 թվականի հունիսի 12-ը: 2004 թվականի հունվարի 5-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի

տեղակալ, իսկ 2005 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ և պաշտոնավարել է մինչև 2006 թվականի մայիսի 18-ը: 2006 թվականից մինչ օրս, համատեղության կարգով, աշխատում է նաև Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնում՝ դոցենտ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա: Երեքն էլ ավարտել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի 2022 թվականի մարտի 9-ի նիստում (արձանագրություն N 8) քննարկվել է կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Գ.Ս.Ասլանյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Գ.Ս.Ասլանյանը ներկայացրել է կառավարման ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Այնուհետև հարցադրումներով հանդես է եկել կառավարման ամբիոնի դոցենտ Է.Ֆ.Ղազարյանը: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, դոցենտ Խ.Ա.Մխիթարյանը, դոցենտներ Ա.Ռ.Կարախանյանը, Ռ.Ս.Ավանեսյանը, ավագ դասախոս Մ.Ռ.Քոչարյանը: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1) կառավարման ամբիոնը երաշխավորել է Գ.Ս.Ասլանյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Քվեարկությանը չի մասնակցել ամբիոնի դոցենտ, տնեսագիտության թեկնածու Էդգար Ֆերդինանդի Ղազարյանը: Նա ներկայացրել է հատուկ կարծիք՝ խնդրելով այն կցել կառավարման ամբիոնի 2022 թվականի մարտի 9-ի նիստի արձանագրությանը, իսկ դրա բովանդակությունը հասանելի դարձնել համալսարանի գիտական խորհրդի անդամներին: Գ.Ս.Ասլանյանի փաստաթղթերը՝ ներառյալ ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքը և Է.Ֆ.Ղազարյանի հատուկ կարծիքը առաքվել են գիտական խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին նիստի անցկացման օրվանից վեց օր առաջ:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 11-ի նիստում (արձանագրություն N 7), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1 (ձեռնպահ էր Գ.Ս.Ասլանյանը)) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գագիկ Սերգեյի Ասլանյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Զեկուցողը ներկայացրեց նաև կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Էդգար Ֆերդինանդի Ղազարյանի հատուկ կարծիքի հետ կապված մրցութային հանձնաժողովի կարծիքը. «Ամբիոնի անդամների հատուկ կարծիքը քննարկելու պարտավորություն նախատեսված չէ մրցութային հանձնաժողովի գործելակարգը սահմանող որևէ իրավական ակտով, հետևաբար հանձնաժողովը չունի հավակնորդի փաստաթղթերը հետ վերադարձնելու իրավասություն, այն վերապահված է միայն ռեկտորին: Այդուհանդերձ, մրցութային հանձնաժողովը հարգելով դոցենտ Էդգար Ղազարյանի խնդրանքը՝ իր կարծիքը դարձնել գիտխորհրդի քննարկման առարկա, գիտական խորհրդի ուշադրությանն է ներկայացնում հետևյալ փաստերը.

1. Կառավարման ամբիոնի նիստը տեղի է ունեցել 2022 թվականի մարտի 9-ին, իսկ մրցութային հանձնաժողովի նիստը՝ մարտի 11-ին, ուստի խնդրո առարկայի վերաբերյալ Էդգար Ղազարյանի հատուկ կարծիքում գրված՝ «...մրցութային հանձնաժողովը որոշում է կայացրել մրցութային պահանջներին նրա (Գագիկ Ասլանյանի) թեկնածության համապատասխանության վերաբերյալ...» հայտարարությունը իրականությանը չի համապատասխանում:

2. Ո՛չ հատուկ կարծիքի տեքստում, ո՛չ էլ դրան կից, առկա չէ որևէ իրավական ակտի հղում կամ այլ փաստարկում (պոստուլատ): Կարծիքում անդրադարձ կա ԲՈԿ-ի տնտեսագիտական դասիչներին, որոնք սակայն, ինչպես Էդգար Ղազարյանն ինքն է նշում, սահմանված են տնտեսագիտական մասնագիտություններով պաշտպանության համար: Բացի այդ, հատուկ կարծիքի հեղինակը, հավակնորդի մաթեմատիկական տնտեսագիտություն մասնագիտությունն ընդգծելով հանդերձ, գրում է. «ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի վարիչի համար մասնագիտական ուղղվածությունը կարող է համապատասխանել միայն «Տնտեսագիտություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (Ը.00.02) մասնագիտությունը: Գագիկ Ասլանյանի թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ոչ թե այդ, այլ «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում (Ը.00.08)» մասնագիտությանը, հետևաբար նա չի կարող հավակնել ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնին»:

Մինչդեռ Գագիկ Ասլանյանի թեկնածուական ատենախոսության ***սեղմագրում*** (կցվում է) մասնագիտությունը (08.00.13) նշված է «Մաթեմատիկական մեթոդներ և

հաշվողական տեխնոլոգիաների կիրառումը տնտեսական հետազոտությունների, ժողովրդական տնտեսության, նրա ճյուղերի պլանավորման և կառավարման մեջ»:

3. Ամբիոնի վարիչի ընտրության կարգը սահմանող «ՀՊՏՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը» չունի ըստ մասնագիտությունների դասիչների ամբիոնի վարիչի մրցույթ հայտարարելու և այդ հիմքով ընտրություն (մրցույթ) անցկացնելու պահանջ:»:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գագիկ Սերգեյի Ասլանյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Ա.Ա.Թավադյանը, դոցենտներ Պ.Ա.Քալանթարյանը, Գ.Ա.Նազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 52, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գագիկ Սերգեյի Ասլանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մարտի 23
Երևան